իրենց գործիներն ու բլբլկած տնակներն էին վերանորոգել տալիս: Դերձակ, կօշկակար, հիւսն ու որմնադիր Կարնի դաշտեցի Հայ վարպետներն էին, որոնք պղնձները նորոգում կամ կլեկում էին: Հովտիկում երկրագործութիւնը թոյլ է, աւելի պարապում են անասնապահութեամբ եւ կաթնատնտեսութեամբ: Մեղուաբուծութիւնը նահապետական է, բայց ընտիր բերք է տալիս: Թռչնաբուծութիւնը թոյլ է եւ անշահ: Բնակչութիւնը ծոյլ է, գութան չունին, արօրը տհաճութեամբ են լծում. այլեւործութիւն սիրով կատարում են. բայց ցուրտը բերք չի հասցնում: Այս Հովտիկի մէջ գրեթէ մացրայ չկայ, երեւում է, որ նախկին ոստանիկներն ու սպայական ազատականները թաթարական արշաւականներին աղուհացով դիմաւորել եւ նրանց լեզուի հետ Իսլամն էլ իւրացրել են, որ իրենց նախկին ազնուական կեանքը վարեն ստրուկների ծառայութեամբ: Անճարացած սերնդէ սերունդ տրքնել են, բայց աշխատելու չեն վարժուել: Որեւ է նապաստակի, կաքաւի, կամ պախրէի որսի ետեւից առանց յոգնելու ժամերով թափառում են, բայց ախոռը մաքրելուց, մուշտակը կարկատելուց խիստ ձանձրոյթ են զգում եւ չափազանց անշնորհք են:

Թէեւ դարերով Իսլամն են դաւանում, բայց հաւատ չունին, հին հեթանոսական նախապաշարումներն այնպէս են ար-